ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ - Ա

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, քննարկելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարրզպետարանի կողմից Սպիտակ համայնքում 2022 թվականին իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները, հսկողության արդյունքում արձանագրված թերությունները, խախտումները և դրանց վերաբերյալ ձեռնարկված միջոցները՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Առաջարկել Սպիտակ համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել համապատասխան միջոցներ հսկողության արդյունքում կազմված արձանագրությունում նշված թերությունները և խախտումները վերացնելու ուղղությամբ:

2. Ընդունել ի գիտություն Սպիտակ համայնքում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի կողմից իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունում նշված թերությունների, խախտումների և դրանց վերացման վերաբերյալ ձեռնարկված միջոցները՝ համաձայն հավելվածի: